

Խաչքառ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
1	2	3	4	5	6	7	8	9
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
10	20	30	40	50	60	70	80	90
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
100	200	300	400	500	600	700	800	900
Ռ	Ս	Վ	Տ	Ը	Ԑ	Ի	Փ	Բ
1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

Օգտվելով այս աղյուսակից լուծեք խաչքառը.

Հորիզոնական

- Զամբյուղում կան երկու գույնի վարդեր: Առանց նայելու ամենաքիչը քանի՞ վարդ վերցնելով՝ կարելի է համոզված լինել, որ կունենանք գոնե երկու միագույն վարդ: $2+1=3$ Գ
- Ո՞ր բնական թվին է հավասար այն կոտորակը, որի համարիչն ու հայտարարը իրար հավասար են: 1 Ա
- Գտիր ամենափոքր քառանիշ թվի հնգապատիկը: $1000 \times 5 = 5000$
Ը

- Պուրակում երփներանգ ծաղիկների $1/4$ մասը հավասար է ամենափոքր եռանիշ թվին: Քանի՞ ծաղիկ կար պուրակում:
 $100 \times 4 = 400$ Ն
- Գտիր ամենամեծ միանիշ թվի $1/9$ մասը: $9:9 \times 1 = 1$ Ա
- Մայրության տոնին ընդառաջ Տիգրանն ու իր եղբայրը որոշեցին մայրկին միասին ծաղիկ նվիրել: Նրանք միասին ունեին 1600 դրամ: Որքա՞ն գումար ուներ նրա եղբայրը, եթե Տիգրանը նրանից 3 անգամ շատ գումար ուներ: $3+1=4$, $1600:4=400$ Ն
- Ո՞րն է 16 թվի ամենափոքր բաժանարարը: 1 Ա
- Գտիր 30 թվի ամենամեծ բաժանարարի տասնապատիկը:
 $30 \times 10 = 300$ Յ
- Եթե Դավիթի տնկած կակաչների քանակը եռապատկեք, արդյունքը ավելացնեք 40-ով, կստանաք ամենափոքր եռանիշ թիվը: Քանի՞ կակաչ էր տնկել Դավիթը: $100 - 40 = 60$, $60:3 = 20$ Ի
- Գտիր 400-ի ամենափոքր բազմապատիկը: 400 Ն

Ուղղահայաց

- Ո՞ր 16000-ի $1/4$ մասը: 4000 Տ
- Գտիր 599-ի ամենամեծ ու ամենափոքր բաժանարարների գումարը: $599+1=600$ Ո

Ն

- Գտիր 8000 և 1600 թվերի քանորդը: 5 Ե
- Գտիր 2000 թվի $5/2$ մասը: $2000:2 \times 5 = 5000$ Բ

			Տ						
			Ո						
Գ	Ա	Բ	Ն	Ա	Ն	Ա	Յ	Ի	Ն
			Ե						
			Բ						